Համազասպ ԳԱԼՍՏՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

1989 թ. ավարտել է ԵրԺՏԻ (այժմ՝ ՀՊՏՀ) պլանատնտեսագիտական ֆակուլտետը: 1980-1982 թթ. ծառայել է խորհրդային զինված ուժերում: 2004 թ. սպացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2004-2023 թթ. դասավանդել է ՀՀ կառավարման ակադեմիայում, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում և Տուրիզմի հայկական ինստիտուտում:

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող է:

Շուրջ երեք տասնյակ գիտական, վերլուծական հոդվածների և 3 մենագրության հեղինակ է:

https://orcid.org/0000-0001-9014-5892

ԿԻԼԻԿԻԱՅԻ ԴԱՍԵՐԸ.
ՄԱՍ ՎԵՐՋԻՆ*

DOI: 10.52174/2579-2989_2024.2-94

Հիմարությունն այն է, երբ մենք կրկնում ենք նույն սխալները՝ ամեն անգամ սպասելով նոր արդյունքի:
Ալբերտ Էյնշտեյն

Հիմնաբառեր. *Կիլիկիայի հայկական հանրապետություն, ֆրանսիական մանդատ, Առաջին աշխարհամարտ, ցեղասպանություն, Հայկական լեգեոն*

Կիլիկիայի հայկական թագավորության պատմությունը, որպես պետականակերտման հայոց պարբերապատկերում այլընտրանքային լուծման սկզբունքով կառուցված պետական միավոր, մեր պատմական դասերի անգնահատելի հավաքածուի կարևոր մասերից մեկն է: Կիլիկիայի թագավորության անկումն իրավացիորեն համարվում է հայոց միապետական կենսընթացքի վերջին փուլը: Սակայն, հետագան ցույց տվեց, որ հատկապես մերձավորարևելյան տարածաշրջանում հայկական Կիլիկիայի հաղթաթուղթն ամբողջապես «խփված» չէր և այն դեռևս պահպանվել էր Արևմուտքի խոշոր «խաղացողների խաղաթղթերի կապուկում»:

Հոդվածաշարի վերջին մասում, ժամանակագրական առումով, շուրջ հինգուկեսդարյա թռիչք է կատարվում դեպի XX դարի սկիզբ՝ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջան, երբ Թուրքիան, որի վարչական կազմում էր նաև Կիլիկիայի տարածաշրջանը, որպես Գերմանիայի զինակից երկիր, մերձավորարևելյան ճակատում ակտիվորեն մասնակցում էր պատերազմական գործողություններին:

Պատերազմի բացասական ելքի պարագայում

---

* *Սկիզբը՝ նախորդ համարներում.*
«Ամբերդ» Տեղեկագիր 2023/1 (20) (https://asue.am/upload/files/amberd/2023-year-1/12.pdf)
«Ամբերդ» Տեղեկագիր 2023/2 (21) (https://asue.am/upload/files/amberd/2023-year-2/15.pdf)
«Ամբերդ» Տեղեկագիր 2023/3 (22) (https://asue.am/upload/files/amberd/2023-year-3/11.pdf)
«Ամբերդ» Տեղեկագիր 2023/4 (23) (https://asue.am/upload/files/amberd/2023-year-4/12.pdf)
«Ամբերդ» Տեղեկագիր 2024/1 (26) (https://asue.am/upload/files/amberd/2024-year-1/12.pdf)

Թուրքիային սպառնում էր Անտանտի[1] երկրների, մասնավորապես՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կողմից, ըստ սեփական հավակնությունների և աշխարհաքաղաքական պատկերացումների, տարածքների բաժանման սցենարի իրականացման վտանգը:

Հենց այդ ժամանակահատվածում էր, որ Արևմուտքի խոշոր «խաղացողները» սեփական «խաղաթղթերի կապուկից» կրկին հանեցին Կիլիկիայի հաղթաթուղթը՝ այս անգամ արդեն ոչ թե թագավորություն, այլ ինքնավար հայկական հանրապետություն ստեղծելու նպատակով:

Այս դասը հատկապես ուշագրավ է այն տեսանկյունից, որ բացահայտում է Արևմուտքի և Հյուսիսի հավաքական վարքագիծը մի ազգի նկատմամբ, որը հենց Առաջին աշխարհամարտի տարիներին հանդիսացավ նախ՝ Օսմանյան կայսրության, ապա նրա ժառանգորդ Թուրքիայի ցեղասպան քաղաքականության զոհը: Ընդ որում, Կիլիկիայի տարածաշրջանն իր հայ բնակչություն ունեցող քաղաքներով ու բնակավայրերով դարձավ Թուրքիայի ցեղասպան քաղաքականության հիմնական թիրախներից մեկը:

Վերադարձի երազախաբություն. առաջին արարի ավարտը

Կիլիկիայի թագավորության անկմանը նպաստող գործոնների «փնջում» կարևոր էր Եգիպտոսի սուլթանության դերը, որն իր ռազմաքաղաքական նախագծերը, կարծես թե, կազմում էր արևմտյան գաղափարաբանական հակասություններին զուգընթաց՝ իր վարած քաղաքականությամբ, որպես կանոն, մեկ քայլ առաջ անցնելով Փոքր Ասիայում զավթողական նպատակներ իրագործող թյուրքական ցեղախմբերից: Սուլթանության նվաճողական քաղաքականությունը, որի գերակա շարժառիթը Կիլիկիայի նավահանգստային խաչմերուկին տիրանալու և այդպիսով տնտեսական շրջափակումից դուրս գալու կենսական մղումն էր, հասավ իր հանգուցալուծմանը Այաս միջազգային նավահանգըստի անկումով (1337 թ.)[2], որը թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական առումով, կոտրեց Կիլիկիայի թագավորության արդեն իսկ թուլացող «ողնաշարը»: Ինչ վերաբերում է թուրքական ցեղախմբային միավորների աշխուժացման միտումին, ապա դա արդեն իսկ նկատելի էր 1320-ականներին, երբ նրանց ներխուժումները Հյուսիսային Կիլիկիա սկսեցին կրել պարբերական բնույթ: Իհարկե, Այասի անկումը մեծ հարված էր Արևմուտքին, որը, ընկղմված լինելով սեփական հակամարտությունների հորձանուտում, այդուհանդերձ փորձում էր ինչ-որ կերպ մասնակից լինել կիլիկյան ճգնաժամի կանխարգելմանը: Սակայն, այդ փորձերն այլևս չի կարելի դիտարկել որպես միասնական ու համակարգային: Մասնավորապես՝ հակաեգիպտական «փաթեթը» հիմնականում արտահայտվում էր Հռոմի պապի գործողություններով, որոնք իրենց բնույթով օպերատիվ մարտավարական էին, այլ ոչ թե ռազմավարական: Դրանք առավելապես առևտրային հարաբերությունների դրվագային լուծումներին միտված և նոր իրողությունները չգնահատող ու հաշվի չառնող քայլեր էին և, ըստ էության, ավելի էին նպաստում եգիպտական նվաճողական քաղաքականության գործնական փուլի իրականացմանը, որտեղ շահագրգիռ կողմերից մեկն էր Հալեպի սուլթանությունը: Արևմուտքն արդեն ընկղմվել էր անլուծելի հակամարտությունների մեջ, որոնցից հիմնականը՝ հարյուրամյա պատերազմը[3], ուղղակի անմիջականորեն ազդեց ինչպես Խաչակրաց արշավանքների գաղափարաբանական ձևախեղման, այնպես էլ մերձավորարևելյան քաղաքականության վերանայման գործընթացների վրա, որի հետևանքով ոչ միայն սկսեցին թուլանալ, այլև դանդաղորեն վերանալ քրիստոնեության տարածաշրջա-

[1] Անտանտ՝ ռազմաքաղաքական դաշինք Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև՝ ի հակակշիռ Եռյակ միության՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի:

[2] Զ. Գևորգյան, Աշխարհաքաղաքական գործընթացները և միջազգային առևտուրը Կիլիկյան Հայաստանում (1201-1337 թթ.), ՀՀ ԳԱ ՊԻ, https://arar.sci.am/dlibra/publication/308434/edition/283214/content

[3] Անգլո-ֆրանսիական տարածքային վեճերից բխող պատերազմական մի ողջ դարաշրջան՝ 1337-1453 թթ., որը պատմագիտական աղբյուրներում հայտնի է «Հարյուրամյա պատերազմ» անվանմամբ:

նային հիմնական բաստիոնները:

Կիլիկիայի հայկական թագավորության իրավական անկումից հետո հավաքական Արևմուտքը շարունակում էր փայփայել խաչմերուկային ակտիվ տարածաշրջան վերադառնալու և այնտեղ կրկին ամրապնդվելու ու ընդարձակվելու հույսը: Եվ պատահական չէր, որ հայոց վերջին օրինական թագավորը՝ Լուսինյանների արքայատան ներկայացուցիչ Ամորի Լուսինյանի և Լևոն Գ-ի դուստր Զաբելի որդի Ջիվանի ու վրաց արքայադուստր Սոլդանանի որդի կաթոլիկ Լևոն Զ Լուսինյանը, անկախ այդ հանգամանքից, որ թագավորությունը, որպես պետական կառույց արդեն գոյություն չուներ, իսկ վերջինս դեռևս գերեվարված էր Եգիպտական սուլթանության կողմից, գերեվարումից 7 տարի անց Արևմուտքի ջանքերով ազատվեց (1382 թ.) և տարհանվեց Եվրոպա: Լևոն Զ-ն հավաքական Արևմուտքի վերջին հույսն էր, որին ոչ միայն ազատեցին, այլև տվեցին վտարանդի թագավորի կարգավիճակ՝ դրանից բխող բոլոր արտոնություններով հանդերձ: Մասնավորապես՝ Կաստիլիայի Հովհան I թագավորը[4], որը մեծ դերակատարում ուներ Լևոն Զ-ին գերեվարումից ազատելու գործընթացում, արդեն Եվրոպայում ազատության մեջ գտնվող հայոց թագավորին պարգևեց իսպանական Մադրիդ, Վիլյառեալ, Անդուխար քաղաքները՝ միաժամանակ խոստանալով օգնել ու օժանդակել վերջինիս՝ Կիլիկիա վերադառնալու և վերստին հայկական թագավորությունը «վերակենդանացնելու» հարցում: Հովհան I-ի վարքագիծը, ըստ էության, Արևմուտքի վերջին փորձն էր «վերբեռնելու» աշխարհաքաղաքական ձախողված ծրագիրը, շտկելու նախագծի սկզբունքային բացթողումներն ու սխալները և պահպանելու կաթոլիկ կազմավորումների ներկայության հաշվեկշիռը տարածաշրջանում:

ՆԿԱՐ 1

Նկարում՝ հոդվածաշարի հեղինակը՝ Փարիզի արվարձանում գտնվող Սեն Դենի բազիլիկում, Կիլիկիայի վերջին թագավորի գերեզմանաքանդակի մոտ, որի վրա գրված է. «Այստեղ հանգչում է ազնվաբարո եւ հիասքանչ արքայազն Լեւոն դ Լուսինյան Զ-ն, Լատինական Հայաստանի թագավորը, որը մահացել է Փարիզում 1399 թվականի նոյեմբերի 29-րդ օրհնյալ օրը: Աղոթեք նրա համար»:

[4] Կաստիլիայի թագավորություն (իսպ.՝ Reino de Castilla [ռեյնո դե կաստիլյա]) միջնադարյան պետություն Պիրենեյան թերակղզու տարածքում:

Ինքնին հասկանալի էր, որ կաթոլիկ Լևոն Զ-ի վերադարձով պետք է ազդարարվեր կաթոլիկ հայկական թագավորության գոյության փաստը: Միգուցե այդպես էլ լիներ, սակայն պատմության անիվը պտտվեց այլ տրամաբանությամբ, և մերձավորարևելյան «խաղասեղանին» Կիլիկիայի հայկական թագավորության հաղթաթուղթն Արևմուտքի համար դանդաղ, բայց հաստատուն կերպով կորցրեց իր արժեքն ու զորությունը: Դրանում, ցավոք, մեղքի իրենց մեծագույն բաժինն ունեին հայ իշխանավորներն ու ՀԱԵ-ն, որոնք թագավորության անկման ժամանակահատվածում ու անգամ փաստացի անկումից հետո չկարողացան գալ ընդհանուր հայտարարի, ըմբռնել օրհասական իրավիճակի լրջությունը, գնահատել հարևանների գոյաբանական շահերը և սեփական շահի գերակայության սկզբունքով գնալ ոչ թե դրանց հակադրվելու, այլ համադրվելու ճանապարհով: Եվ դա նույնպես առիթ էր, որ Արևմուտքը հրաժարվեր Կիլիկիայի հայկական թագավորության «վերբեռնման» գաղափարից՝ այդպիսով ազդարարելով նաև իր ռազմաքաղաքական հեռացումը տարածաշրջանից:

Կիլիկիայի վերջին հայոց միապետը, ըմբռնելով նոր իրողությունը, ներփակվեց իր մերձավորների նեղ շրջանակում և կյանքի վերջին տարիներն անցկացրեց իրեն առավել հոգեհարազատ՝ Փարիզի Սենտ Օուեն պալատում, որը նրան մեծահոգաբար հատկացրել էր Ֆրանսիայի Շառլ VI թագավորը: Հայոց վերջին օրինական թագավորն իր մահկանացուն կնքեց 1399 թվականին:

Կարելի է անվերջ դատողություններ անել Կիլիկիայի թագավորության անկման օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառների մասին՝ փորձելով ինքնահամոզման անպտուղ ճանապարհով ձևավորել այդ վախճանի անխուսափելիությունը, և դա պայմանավորել արտաքին, հատկապես տարածաշրջանի իսլամական պետական միավորների գերակա նպատակների վերափոխումներով ու քրիստոնյա Արևմուտքի աշխարհաքաղաքական գաղափարների մտափոխումներով ու ձևախեղումներով: Այսինքն՝ ճակատագրապաշտական միտքը տանել դեպի արտաքին միջավայր՝ այնտեղ փնտրելով մեղավորներին: Սակայն, իրերի տրամաբանական ընթացքն ու դասավորությունը, հատկապես XIV դարի սկզբնամասից սկսած, մեզ հստակ մատուցում է անգնահատելի դասեր, որոնք առարկայորեն ի ցույց են դնում տվյալ ժամանակահատվածում թագավորության ներքին ու արտաքին քաղաքական օրակարգերի կենսակործան անհամադրելիությունն ու իշխանություն-ՀԱԵ-ժողովուրդ եռանկյունու թևերի միջև առաջացած ներազգային անջրպետը, որոնց հիմքում քաղաքական դոկտրինների պարբերական փոփոխումն ու դրանից բխող ռազմավարական գործընկերների հարափոփոխությունն էին: Միաժամանակ, պետության մակարդակով կաթոլիկության ներառման սկզբունքի ընդունումը և ապա կիրառման տապալումն ու ՀԱԵ-ի եկեղեցակենտրոն, այլ ոչ թե ազգակենտրոն վարքագիծը դարձան ներքին միջավայրի «ցեցոտման» հիմնական գործոնները: Ի վերջո, հարևանների հետ հարաբերությունների ոչ միանշանակ վարքագիծը, անսպասելի ու չհիմնավորված դարձափոխումները, միակողմանի զիջումներն ու մինչև վերջ չհաշվարկված քայլերը մեկ ամբողջության մեջ բավարար էին ներսից պետության ինստիտուցիոնալ հիմքը սասանելու և դա պատմության թափանիվի տակ ճզմելու համար:

Հայկական Կիլիկիա. երկրորդ արար

Կիլիկիայի հայոց թագավորության անկումը, թվում է, այլընտրանքային սկզբունքով հայոց պետականության ստեղծման միակ արարն էր, որի վերջաբանն ազդարարվեց շուրջ 650 տարի առաջ: Բայց որքան էլ տարօրինակ է, Կիլիկյան Հայաստանի լինելիության գաղափարը «փոշոտվել», սակայն դեռևս պահպանվել էր Արևմուտքի գաղափարաբանական «զինանոցում», և առաջին արարի ավարտից հինգուկես դար հետո, XX դարի սկզբնամասում՝ Առաջին աշխարհամարտին զուգընթաց, սկսվեց երկրորդ արարը՝ հիմնականում արևմտյան երկու պետական միավորների՝ Անգլիայի և Ֆրանսիայի, բայց առավելապես վերջինիս «մեկենասությամբ», որը մերձավորարևելյան աշխարհաքա-

ղաքական «խաղասեղան» վերադառնալու համար կրկին փորձեց օգտագործել հայկական Կիլիկիայի գործոնը՝ այս անգամ ոչ թե այլընտրանքային միապետություն, այլ իր հովանու տակ՝ այլընտրանքային ինքնավար հանրապետություն կառուցելու ակնկալիքով:

Ցավոք, պատմական առումով, մեզանից ընդամենը մի քանի սերունդ հեռավորության վրա գտնվող այդ ժամանակահատվածը շատ քիչ են ուսումնասիրել ու վերլուծել պատմաբանները, քաղաքագետներն ու տնտեսագետները, և սա վերաբերում է ոչ միայն հայոց մտավոր շերտին, այ, նախ և առաջ ֆրանսիական մասնագիտական հանրույթին: Պատճառը, ըստ երևույթին, պետք է փնտրել հավակնոտ ծրագրի ձախողման, վճռորոշ որոշումների իրական դրդապատճառների, ֆրանսթուրքական ստվերային պայմանավորվածությունների չհանրայնացման ցանկության և մի շարք այլ գործոնների հավաքական խմբում, որն էլ, ամենայն հավանականությամբ, չի շահադրդում կատարել տվյալ գործընթացի համապարփակ, մասնագիտական անկողմնակալ վերլուծություններ, բացահայտումներ ու պարզաբանումներ, քանի որ դրանք կարող են լինել չափազանց անցանկալի ու ցավոտ՝ նախ ֆրանսիացիների, ապա նաև մեզ՝ հայերիս համար:

XX դարի խնդրո առարկա ժամանակաշրջանն աչքի էր ընկնում աշխարհաքաղաքական վերաձևումների գործընթացով, որտեղ հիմնական կիրառելի գործիքը ոչ թե բանակցությունների սեղանն էր, այլ պատերազմի մարտադաշտը[5], որն իրար դեմ էր հանել շուրջ չորս տասնյակ պետություններից կազմված երկու խոշոր կոալիցիայի[6]: Ընդ որում, աշխարհաքաղաքական այս ծրագիրն արդեն ձերբազատված էր խաչակրաց «շղարշներից» և ենթադրում էր Երկիր մոլորակի արևելաեվրոպական ու մերձավորարևելյան տարածաշրջանների նոր քարտեզագրում, որի հիմքում դարձյալ ու կրկին աշխարհի մեծ «խաղացողների» տնտեսական ու ֆինանսական շահերն էին:

Նախորդ դարի սկզբնամասում՝ 1916 թվականին, երբ հայոց ցեղասպանության զազրելի ծրագրի հիմնական փուլն ավարտվել էր, ու բզկտված հայության մեկ մասնիկը՝ շուրջ 120 հազար հայ, ծվարել էր պատմական Կիլիկիայի տարածքում, Անտանտի երկրների միջև կնքվեց Սայքս-Պիկոյի[7] գաղտնի համաձայնագիրը[8], որով նախատեսվում էր Առաջին համաշխարհային պատերազմի դրական ելքից հետո մասնատել տարածաշրջանի չարիքի կենտրոնը՝ Օսմանյան կայսրությունը, և հստակեցնել ազդեցության գոտիներն ու դրանց սահմանները: Համաձայնագիրը ենթադրում էր, որ Լիբանանը, Սիրիան, Հյուսիսային Իրաքը և Հարավարևելյան Թուրքիան ճանաչվում են Ֆրանսիայի հետաքրքրությունների գոտի: Ի դեպ, Կիլիկիայի երկրորդ արարում, ի դեմս Ռուսաստանի, ի հայտ եկավ նոր «խաղացող», որն արարի ընթացքում նախ՝ ցարական էր, ապա դարձավ բոլշևիկյան: Ցարական Ռուսաստանը, որպես Անտանտի ակտիվ դերակատար, ի պաշտոնե քաջածանոթ էր գաղտնի համաձայնագրի՝ մերձավորարևելյան տարածաշրջանի խնդրահարույց հարցերի դասակարգման ու լուծման ուղիների նախանշման դրույթներին: Այսինքն՝ դրանք նաև քննարկվում էին վերջինիս հետ՝ նրա լիազորված անձի՝ արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովի[9] միջոցով:

Համաձայնագրի տրամաբանությունից բխում էր նաև այլ իրավական փաստաթղթերի կազմումը: Հենց այդ համատեքս-

[5] Առաջին համաշխարհային պատերազմը (1914-1918 թթ.) ռազմական հակամարտություն էր, որտեղ ներգրավված էր 38 երկիր: Այս պատերազմի ժամանակ ռազմական գործողությունները տարածվեցին ինչպես Եվրոպայում, այնպես էլ Մերձավոր Արևելքում, Աֆրիկայում և Ասիայի որոշ հատվածներում:

[6] Հակամարտությունն ընթանում էր ձևավորված երկու կոալիցիայի միջև, որտեղ մի կողմում Ռուսական կայսրություն/դաշնությունը, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Բելգիան, Իտալիան, ԱՄՆ-ն, Ճապոնիան, Հունաստանը, Սերբիան, Ռումինիան և ուրիշներն էին, իսկ մյուս կողմում՝ Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Թուրքիան, Բուլղարիան և այլն:

[7] Համաձայնագիրն անվանվել է Բեյրութում Ֆրանսիայի գլխավոր հյուպատոս Ֆրանսուա Ժորժ Պիկոյի և Անգլիայի արտաքին գործերի Մերձավոր Արևելքի փորձագետ Մարկ Սայքսի ազգանուններով: Համաձայնագրի կետերը համաձայնեցվել են նաև ցարական Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովի հետ:

[8] Մակիչ Արզումանյան, Հայաստան 1914-1917, Հայաստան հրտ., Երևան, 1969, էջ 677:

[9] Историческая справка. Сазонов Сергей Дмитриевич. https://www.mid.ru/ru/about/professional_holiday/history/1713935/

ՆԿԱՐ 1

Ֆրանսիական մերձավորարևելյան հետաքրքրությունների գոտին Առաջին աշխարհամարտից հետո (դեղին կետագծեր), 1918 թ.

տում էլ, հաշվի առնելով Հարավային Թուրքիայում հայ բնակչության անվտանգային շահերը, նույն տարում՝ 1916 թ., կնքվեց ֆրանս-հայկական համաձայնագիրը, որի արդյունքում Ֆրանսիայի զինված ուժերում հայ զինվորների մասնակցային մեծամասնությամբ ձևավորվեց Արևելյան, հետագայում Հայկական կոչվող լեգեոնը[10]: Համաձայնագրով նախատեսված՝ իր տարածաշրջանային մասաբաժնի հստակեցման և դիրքերի ամրապնդման նպատակով 1918 թվականի նոյեմբերից մինչև 1921 թվականի հոկտեմբեր հայկական Կիլիկիայի տարածքում Ֆրանսիան անցավ ռազմական գործողությունների, որոնք պատմության մեջ հայտնի են ֆրանկո-թուրքական պատերազմ կամ Կիլիկիայի արշավանք (ֆր.՝ La campagne de Cilicie) անվանմամբ: Անվանումը պատահական չէր, քանի որ հենց Կիլիկիան, որպես ֆրանսիացիների հետաքրքրությունների գոտի, դարձավ ֆրանսիական «նախագծի» գլխավոր թատերաբեմը (նկար 2):

Ինչ խնդիր էր փորձում լուծել Ֆրանսիան կիլիկյան երկրորդ արարում: Ի վերջո, հասկանալի է, որ այն, ինչ կարելի էր հեշտությամբ իրագործել Իրաքում և Սիրիայում, այդքան էլ հարթ չէր ընթանալու Կիլիկիայում, քանի որ տվյալ դեպքում մեծ էր թուրքական իշխող վերնախավի և տեղային կառավարիչների կողմից հակազդեցության հավանականությունը: Միաժամանակ, թուրքերը հարավային ճակատում վարպետորեն խաղում էին անգլիացիների ու ֆրանսիացիների՝ ոչ այնքան համակարգված քայլերում առկա թույլ օղակներն էլ ավելի թուլացնելու վրա՝ հընթացս օգտագործելով արևելյան ճակատում ռուսների, ինչու չէ, նաև հայերի չհամակարգված գործողությունները: Ժամանակագրական առումով, կիլիկյան երկրորդ արարը համընկնում էր ոչ միայն Առաջին

[10] Հայկական լեգեոն. հայերից կազմված ֆրանսիական բանակի զորամաս, որը կազմավորվել է 1916 թվականին Անտանտի երկրների ներկայացուցիչներ Մարկ Սայքսի, Ժորժ Պիկոյի և Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի միջև՝ Լոնդոնում կնքված համաձայնագրի հիման վրա: Հայ լեգեոնականները ֆրանսիական զորքերի կազմում մասնակցել են Օսմանյան կայսրության դեմ պատերազմական գործողություններին Սիրիա-պաղեստինյան, իսկ ապա կիլիկյան ռազմաճակատներում:

Ներդիր 1

Հատկապես ֆրանսիական վարքագիծն ուներ մեկ կարևոր առանձնահատկություն, որը չկար այլոց պարագայում: Այստեղ հաճախ առկա էր անհատի դիրքորոշման գործոնը, որը շատ դեպքերում չուներ համընկնումներ պետության դիրքորոշման հետ: Այս վարկածը հաստատվում է Մեծ եղեռնի ժամանակահատվածում ֆրանսիացի որոշ ռազմական գործիչների վարքագծի ուսումնասիրությամբ, երբ նրանց կողմից կատարվող հայանպաստ քայլերը հաճախ իրականացվում էին ինքնուրույն որոշումների կայացման արդյունքում: Ակնառու օրինակ է Մուսա լեռան հերոսամարտի դրվագը: Արձանագրված փաստ է, որ 1915 թվականի սեպտեմբերի 5-ին ֆրանսիական ռազմածովային ուժերի «Գիշեն» հածանավի հրամանատարությունը, տեսնելով Մուսա լեռան ինքնապաշտպանությունն իրականացնող հայերի՝ օգնության կանչող դրոշակները, առանց վերադաս հրամանատարության թույլտվության, մակույկ է ուղարկում դեպի ափ և ինքնուրույն կապ հաստատում հայերի ինքնապաշտպանությունը համակարգող Եսայի Յաղուբյանի հետ, որն այդ պահին ունենալով հրացաններով ու մի քանի թնդանոթով զինված ընդամենը 600 զինյալ, գտնվելով պարենի ու ռազմամթերքի խիստ սակավության պայմաններում, ինչպես նաև 15-հազարանոց թուրքական կանոնավոր բանակի զինվորների և 4-հազարանոց բաշիբոզուկների հրոսակախմբի ամուր շրջափակման մեջ, կենաց ու մահու պայքար էր մղում՝ պաշտպանելով Մուսա լեռան հարակից 6 հայկական գյուղերից լեռը բարձրացած շուրջ 5000 խաղաղ բնակչի կյանքը: 1915 թվականի սեպտեմբերի 10-ին՝ Հերոսամարտի 53-րդ օրը, ֆրանսիական երկու ռազմանավ մոտենում է Մուսա լեռան ծովափնյա շրջանին և փոխծովակալ Լուի Դարտիժ դյու Ֆուրնեի (1856-1940 թթ.) նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ, ֆրանսիացի նավաստիների մասնակցությամբ, տարհանում է մոտ 4.000 հայերի, որոնց թվում էին նաև ինքնապաշտպանական ուժերի ողջ մնացած զինյալները: Վերջիններս ֆրանսիական «Ժաննա դ'Արկ» ու այլ ռազմանավերով փոխադրվում են դեպի եգիպտական Պորտ Սաիդ, որտեղ ստանում են ժամանակավոր ապաստան: Ֆրանսիացի ռազմական գործիչների գործողություններն անձնազոհության ու մարդասիրության վառ օրինակ են, քանի որ նրանք, անտեսելով ռազմական կարիերայի ավարտման ու բարձր պաշտոնի կորստի վտանգը, կատարել են մարդասիրական անգնահատելի խիզախ քայլեր, որոնք ի սկզբանե համաձայնեցված չեն եղել վերադաս բարձրագույն ռազմական հրամանատարության հետ: Սրանք հարգանքի և երախտագիտության արժանի մարդիկ էին, անհատներ, որոնք եղել և մնում են երախտապարտ հայ ժողովրդի բարեկամները:

աշխարհամարտի ընթացքի ու ավարտի հետ, այլև ներքին հաղորդակից անոթներով փոխշաղկապված էր ռուսաստանյան հեղափոխությանը (1917 թ.), Արևելյան Հայաստանում Առաջին Հանրապետության ստեղծմանը (1918 թ.), Բաթումի (1918 թ.), Սևրի (1920 թ.), Լոզանի (1923 թ.) պայմանագրերի տրամաբանությանը, որոնցից յուրաքանչյուրն իր շտկումներն ու հետքն էր թողնում մեծ «խաղացողների» ռազմավարական ու մարտավարական որոշումների կայացման վրա: Այս ներազդող գործոնների փաթեթում էր նաև միջազգային բանակցային հարթակներում արևմտահայության և արևելահայության շահերը ներկայացնող հայկական գործիչների՝ հաճախ չհամակարգված, անիրատես ու պատեհ պահի ազդեցությամբ իրականացվող քայլերի շարքը, որը, սակայն, առանձին քննարկման նյութ է:

Վերադառնալով Ֆրանսիայի գործողությունների տրամաբանությանը (կոնկրետ՝ Կիլիկիայի պարագայում)՝ նշենք, որ բացի հինգուկեսդարյա ծրագրերի պատմական ձախողման բարոյահոգեբանական բեռից, այն՝ ժամանակագրական առումով, անշուշտ նաև ներառում էր թարմացված քաղաքական ծրագիր՝ գործնական նպատակներով, որոնք փաթեթավորվում էին արդարության կամ հայ մարդու կենսական իրավունքների վերականգնման ականջահաճո ձևակերպումներով:

Հայկական լեգեոնն ու ֆրանսիական խոսքումները

Այս և նմանատիպ գործողությունները ցույց են տալիս, որ ֆրանսիական մղումներում արդարության վերականգնման սկզբունքային բաղադրիչն իրոք առկա էր, և հետևաբար, դա կարելի է նաև դիտարկել որպես քաղաքական դրդապատճառի կարևոր մասնիկ հայկական Կիլիկիայի երկրորդ արարը նախաձեռնելու համար: Սրանով հանդերձ, հայերի հանդեպ պատմականորեն ձևավորված բարեկամական վերաբերմունքն ու բարոյական պատասխանատվությունը ֆրանսիացիները նրբորեն համակցեցին սեփական շահերի ու տնտեսական նպատակների հետ: Եվ քանի որ Սայքս Պիկոյի գաղտնի համաձայնագրով ուրվագծվել էին Ֆրանսիայի շահերի գոտիները Մերձավոր Արևելքում՝ ներառելով նաև կիլիկյան տարածաշրջանը, ու այդ գոտիներում վերջինս չուներ լիարժեք ռազմական զորախմբեր և առկա էր որոշակի մարդուժի կարիք, իսկ թուրքերի ցեղասպան քաղաքականությունից տնավեր հայ տղամարդկանցից շատերն այդ ժամանակ ձգտում էին ինչ-որ սկզբունքով կազմավորվել ու մասնակցել հայրենի շեների ազատագրմանը, առաջացավ հայ ռազմիկների ներուժն ի շահ ֆրանսիական ռազմավարական նպատակների օգտագործելու գաղափարը, որն առարկայացավ Արևելյան լեգեոնի ստեղծումով, ինչը միանգամից երեք խնդիր լուծեց:

Նախ՝ հայ կամավորներն արդեն իսկ ունեին թուրքերի դեմ կռվելու փորձառություն, երկրորդ՝ առկա էր շահադրդում, քանի որ հայերը, ըստ էության, կռվելու էին կորսված շեների վերադարձման ու ցեղասպանված ընտանիքների վրեժի կրակը սրտում, և երրորդ՝ լեգեոնի ծախսերը համաֆինանսավորվելու էին նաև հայ մեծահարուստների կողմից, իհարկե՝ մեկ կարևոր պայմանով, որ հայ լեգեոնականները հիմնականում տեղակայվեն Կիլիկիայում ու մասնակցեն Կիլիկիայի ազատագրմանը: Ահա այսպես ծնվեց հայ կամավորականների լեգեոնը[11], որի տեղն ու դերն Առաջին աշխարհամարտի և հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության մեջ դեռևս կարոտ է խոր, բազմակողմանի և ազնիվ ուսումնասիրման: Հարկ է նշել, որ հայ կամավորականներին Կիլիկիայի տարածաշրջան «գործուղելու» գաղափարի «հեղինակային իրավունքը» պատկանում է ագլիացիներին, որոնք ի սկզբանե բոլորովին այլ սցենար ու դերակատարում էին նախատեսել նրանց համար: Նպատակը հետևյալն էր. դեռևս Թուրքիայի վերահսկողության տակ գտնվող այդ տարածաշրջանում՝ ներքին ապստամբության օջախներ ստեղծելու համար, օգտագործել կամավորագրված հայերի վրեժխնդիր լինելու պատրաստակամությունը, մարտական ոգին ու ներուժը, նրանց տրամադրել զենք ու զինամթերք, որը կշեղեր թուրքերի ուշադրությունը հիմնական ռազմաճակատից, կջլատեր նրանց ռազմական ներուժը, ինչը վերջնարդյունքում կհանգեցներ թուրքական ճակատի թուլացմանը, ապա պարտությանը պատերազմում:

Սակայն, Թուրքիայի ցեղասպան քաղաքականությունն արդեն մեկ քայլ առաջ էր ընկել անգլիական նախագծի տրամաբանությունից, և Կիլիկիայի տարածաշրջանը հիմնականում հայաթափվել էր: Այսպիսով՝ ապստամբ ուժերին տարածաշրջան «գործուղելու» գաղափարը չիրագործվեց, քանի որ տեղերում նրանց սատարող ու օժանդակող ներուժը՝ ի դեմս տեղաբնակ հայերի, արդեն իսկ առկա չէր: Սա էր, թերևս, հիմնական պատճառը, որ կամավորական խմբերի գործուղումը դեպի Կիլիկիա չեղարկվեց, իսկ գործընթացը ձգձգվեց, որի հիմնական պատճառները երկուսն էին: Նախ՝ հաշվի առնելով գաղտնի համաձայնագրի դրույթները և այն, որ, շահերի ազդեցության գոտու առումով, հիմնական գործողություններն իրականացվելու էին ֆրանսիական հատվածում, անգլիացիները լեգեոնի ստեղծման գաղափարի «բյուրեղացման» ժամանակատար գործընթացը սիրահոժար կերպով թողեցին ֆրանսիական ռազմական հրամանատարության ուսերին, և երկրորդ՝ հայ

[11] Ս.Պողոսյան, Հայկական լեգեոնը Առաջին աշխարհամարտի տարիներին, «Էջմիածին» կրոնագիտական և հայագիտական ամսագիր, 2009, էջ 57, https://arar.sci.am/Content/253207/file_0.pdf

ազգային գործիչները մտավախություն ունեին առ այն, որ հայազգի ռազմական խըմբերի գաղափարի բարձրաձայնումը հնարավոր է՝ էլ ավելի սանձարձակ դարձներ թուրքերին, որոնք, այդ հանգամանքը հաշվի առնելով, կարող էին ավարտին հասցընել Կիլիկիայի ամբողջական հայաթափումը: Սակայն, անկախ այս մտավախությունից, Ֆրանսիան, սթափ գնահատելով իր ռազմական հնարավորությունները տարածաշրջանում և հասկանալով հայկական ռազմական ներուժի անհրաժեշտությունը, այդուհանդերձ փորձեց նյութականացնել հայ կամավորականների՝ տարածաշրջան վերադառնալու գաղափարը, բայց ոչ թե որպես ապստամբ ուժեր, այլ իբրև ռազմական միավոր՝ լեգեոն: Լեգեոնի հավաքակայանը նախատեսվում էր տեղակայել Կիպրոսում՝ օգտագործելով մասնավորապես ռուս-թուրքական ճակատում գերի ընկած հայ ռազմագերիներին, Մուսա լեռան ապստամբ հայերին, եգիպտական գաղթօջախում գտնվող հայ տղամարդկանց: Հայկական կողմից այս գաղափարի իրականացման հիմնական գործընկերը 1906 թվականից Հայ բարեգործական ընդհանուր միության նախագահ Պողոս Նուբարն էր, որը, վերոշարադրյալ մտավախությունից ելնելով, ձգտում էր լեգեոնի կազմավորման գործընթացը հնարավորինս գաղտնիության «շղարշով» պատել: Ինքնին պարզ էր, որ ֆրանսիացիների համար լեգեոնն ունենալու էր երկու մարտադաշտ՝ Կիլիկիա և Սիրիա, ու Պողոս Նուբարը, հասկանալով ֆրանսիացիների ռազմավարությունը, ձգտում էր կորզել Ֆրանսիայի խոստումն առ այն, որ հայկական Կիլիկիային տրվելու է ինքնավարության բարձր աստիճան, ինչին էլ, հաշվի առնելով լեգեոնի որոշիչ գործոնը ֆրանս-թուրքական հակամարտության գոտում, Ֆրանսիան համաձայնեց: Ըստ պայմանավորվածության՝ նախատեսվում էր, որ ինքնավար Կիլիկիայում ոստիկանական ու վարչական պաշտոնները պետք է զբաղեցնեին հայերը, հիմնականում՝ լեգեոնականները: Պողոս Նուբարի դերակատարումն այս գործընթացում հսկայական էր, և դրա խոսուն վկայությունն է այն, որ վերջինս մանրամասնորեն տեղեկացված էր Սայքս Պիկոյի գաղտնի համաձայնագրի կետերին և պարբերաբար հանդիպումներ էր ունենում համաձայնագրի հեղինակների հետ: Մասնավորապես՝ 1916 թվականի հոկտեմբերի 24-ին ֆրանսիական կառավարության ներկայացուցիչ Ժ. Պիկոյի հետ լոնդոնյան հանդիպման ժամանակ Պողոս Նուբարը տեղեկացվեց, որ կամավորների հավաքագրման և իրականացվող գործողությունների հաջող ելքի պարագայում ազատագրված ինքնավար Կիլիկիային կմիացվեն Սեբաստիան, Դիարբեքիրը, Խարբերդն ու Ալեքսանդրետ նավահանգիստը, որտեղ, բացառությամբ նավահանգստի կառավարչի, մնացած կարևոր կառավարչական պաշտոններում նույնպես նշանակվելու էին հայեր:

Ցավոք, ամեն ինչ հարթ չէր ընթանում բանակցային այս գործընթացում, քանի որ համաձայնագրի կողմերը՝ ի դեմս ֆրանսիացի Պիկոյի և անգլիացի Սայքսի, հաճախ հայ գործչին առաջարկում էին իրարամերժ դիրքորոշումների փաթեթներ, որտեղ տեսանելի էր շահերի բախում: Մասնավորապես՝ անգլիացիները ձգտում էին հնարավորինս թուլացնել ֆրանսիացիների գերակշռող դերը տարածաշրջանում, ֆրանսիացիները, իրենց հերթին, փորձում էին հայ կամավորների ներուժն օգտագործել նաև պաղեստինա-սիրիական ճակատում, ինչին այնքան էլ համաձայն չէր հայկական կողմը: Լեգեոնի կազմավորման նախապատրաստական փուլում ի դեմս ռուսական կողմի, ի հայտ եկավ նաև նոր ներազդող գործոն՝ այն պարզ պատճառով, որ, համաձայն պայմանավորվածության, նախատեսվում էր լեգեոնի կազմում ներառել նաև թուրքական բանակի շուրջ 5 հազար հայ ռազմագերիների, որոնք այդ պահին Կենտրոնական Ռուսաստանում էին, և հետևաբար՝ առկա էր նրանց հաշվառման ու տեղափոխման խնդիրը:

Ի վերջո, ազգային գործիչ Պողոս Նուբարի հետ քննարկումներում արձանա-

գրվեցին հետևյալ հիմնական պայմանները[12].

1. Ֆրանսիան հայերին ուղղված կամավորագրության կոչ է հրապարակում:
2. Ժ. Պիկոյի, Մ. Սայքսի ու Ս. Սազոնովի համատեղ ջանքերով անհրաժեշտ քայլեր են ձեռնարկվում Ռուսաստանում գտնվող հայ ռազմագերիների վերադարձի և կամավորական շարժմանը միանալու համար:
3. Կամավորները չեն կռվում որևէ այլ ճակատում և միայն մասնակցում են ասիական Թուրքիայում իրենց պատմական հայրենիքի ազատագրմանը:
4. Ֆրանսիան երաշխավորում է հաղթանակից հետո իր հովանու ներքո ինքնավարություն շնորհել հայկական Կիլիկիային:

Աշխարհամարտին զուգընթաց տեղի ունեցող իրադարձությունները, խոշոր «խաղացողների» դիրքորոշումների փոփոխությունները, ի վերջո, թուրքական և ապա նաև ռուսական պետությունների կառավարման ձևի հայեցակարգային փոփոխությունները օբյեկտիվորեն ներազդում էին վերը թվարկված նպատակային կետերի իրականացման վրա: Եվ գաղափարից մինչև իրականացում գործընթացը տևեց շուրջ երկու տարի, որը արագ փոփոխվող իրավիճակների պարագայում, հատկապես հայանպաստության տեսանկյունից, կարելի է համարել ճակատագրական կերպով ուշացած: Արձանագրենք միայն, որ Ֆրանսիայի հովանու ներքո ի վերջո ստեղծված՝ Արևելյան, իսկ ապա Հայկական անվանումով լեգեոնը մասնակցեց մի շարք մարտական գործողությունների: Ընդ որում, խախտելով հայկական կողմի հետ ձեռք բերված նախնական հստակ պայմանավորվածությունը, լեգեոնն առաջին մարտական մկրտությունը ստացավ 1918 թվականի սեպտեմբերին՝ Արարայի ճակատամարտում[13], որտեղ հայ ռազմիկները հերոսաբար մարտնչեցին ու էապես նպաստեցին անգլո-ֆրանսիական զորքերի հաղթանակին: Պատմական փաստ է, որ այդ ճակատամարտը որոշիչ եղավ ամբողջ ռազմաճակատի համար և նպաստեց թուրքերի վերջնական պարտությանը, որը եզրափակվեց 1918 թվականին Մուդրոսում կնքված զինադադարով[14]: Մուդրոսի զինադադարից հետո էր, որ, հաշվի առնելով հետագա զարգացումներում Արևելյան լեգեոնի դերաբաշխումն ու առաքելությունը, Ֆրանսիան որոշեց դա բաժանել երկու մասի՝ հայկականի և սիրիականի, ինչի արդյունքում լիբանանյան Բեյրութ քաղաքում տեղակայված Արևելյան լեգեոնի հայկական գումարտակներն ուղարկվեցին Կիլիկիա:

Կիլիկյան ինքնավարության ռազմավարական խնդիրը, իրագործելիության առումով, բարդ էր երկու կարևոր պատճառով: Նախ՝ ինչպես նշեցինք, անկախ գաղտնի համաձայնագրից և անգլո-ֆրանսիական շահերի գոտիների նախանշված բաշխումից, անգլիացիները ձգտում էին թույլ չտալ ֆրանսիացիներին ամրապնդել իրենց դիրքերը Մերձավոր Արևելքում, իսկ նման վարքագծին, առաջին հերթին, նպաստում էին հենց իրենք՝ ֆրանսիացիները, որոնք տվյալ պահին տարածաշրջանում ներկա էին միայն Արևելյան լեգեոնի ռազմական ներուժով, և ոչ ավելին: Երկրորդ՝ Արևելյան լեգեոնի հայկական գումարտակները[15] շուրջ 5000 զինվոր, տեղակայվեցին Ալեքսանդրետայում (Իսկանդարուն), Մերսինում, Տարսուսում, Ադանայում, Ջիհունում և Բոզանտիի ֆորպոստում, որոնք ներկայացնում էին 50 հազար քառ. կիլոմետր մակերեսով պատմական հայկական Կիլիկիայի մի հատվածը, և այդ ոչ մեծաթիվ ուժերով, առանց լրացուցիչ օժանդակության, վերոնշյալ տարածքի վերահսկումն ի սկզբանե անլուծելի խնդիր էր: Արձանագրենք, որ այդ

[12] Նույն տեղում, էջ 60:

[13] Արարայի ճակատամարտը տեղի է ունեցել 1918 թվականի սեպտեմբերի 19-ին՝ Պաղեստինի Արարա բարձունքի վրա: Ֆրանսիական բանակի կազմում հինգհազարանոց Հայկական լեգեոնը ռազմագիտական հնարքներով կարողացավ ճեղքել թուրքական տասերկուհազարանոց բանակի ճակատային գիծը, անցավ նրա թիկունք և գրավեց ռազմավարական բարձունքը՝ վճռելով ճակատամարտի հաղթական ելքը:

[14] Ս.Պողոսյան, Մուդրոսի զինադադարը և հայկական հարցը, Մ.Մաշտոց համալսարան, Լրատու, 2016, https://arar.sci.am/dlibra/publication/388967?language=hyw

[15] Արևելյան լեգեոնում գործում էին 4 հայկական գումարտակներ՝ 4100 զինվորով և 1 սիրիական գումարտակ՝ 700 զինվորով:

ժամանակահատվածում ֆրանսիական զորքերի կողմից Կիլիկիայի ազատագրումը հիմնականում տեղի ունեցավ Հայկական լեգեոնի մարտիկների ուժերով, և հենց նրանց պաշտպանության ներքո էլ տարագիր հայերը Եգիպտոսից ու Սիրիայից սկսեցին վերադառնալ իրենց ավերված օջախները: Սակայն, նրանց վերապահված չէր այդուհետ ապրել խաղաղ ու ստեղծագործ կյանքով: Իրենց հիմնական առաքելությունն այդպես էլ չիրագործած՝ Հայկական լեգեոնի մարտիկներն անգամ ռազմական այդ միավորի լուծարումից և ֆրանսիացիների՝ Կիլիկիայից հեռանալուց հետո մնացին կիլիկիահայերի կողքին ու մասնակցեցին կրկին ամենաթողության մեջ հայտնված թուրքերի դեմ ինքնապաշտպանական մի շարք ծանր մարտերի:

Հայկական լեգեոնի պատմական դասը, թերևս, ամբողջապես վերլուծված չէ և, իհարկե, կարիք ունի բազմակողմանի աղբյուրներից նորանոր նյութերի մեկտեղման ու խորքային հետազոտման:

Հայկական հողերի վերադարձի կառուցակարգի անկատարությունը

Ընդհանրապես, Առաջին աշխարհամարտի հիմնական յուրահատկությունը կայսրապետությունների փլուզման գործընթացի «կատալիզատոր» լինելն էր, ընդորում, դա վերաբերում է թե՛ հաղթող, թե՛ պարտվող կոալիցիաներում հիմնական դերակատարում ունեցող պետություններին: Մասնավորապես՝ տվյալ ժամանակահատվածում Ռուսական կայսրությանը զուգահեռ, փլուզվեցին գերմանական, թուրքական և ավստրո-հունգարական կայսրությունները, և իհարկե, չփլուզված պետությունները, մասնավորապես՝ Անգլիան և Ֆրանսիան, ինչ-որ տեղ առավելություն ձեռք բերեցին՝ ավելի հանգիստ իրավիճակում մշակելու իրենց հակաճգնաժամային որոշումներն ու դրանից բխող քայլերի հաջորդականությունը: Այդ դիտանկյունից, ավելի հեռատես և հաջողակ էին անգլիացիները, որոնց հիմնական քաղաքականությունն ուղղված էր ոչ թե պատմական արդարության՝ ինչ-ինչ երանգներ «մգացնելուն», այլ ավելի հողեղեն ու նյութական տիրույթ, այն է՝ հասնել տարածաշրջանում ածխաջրածնային ընդերքով հարուստ գոտիների համընդհանուր վերահսկմանը՝ հընթացս նպաստելով հնարավոր մրցակիցների թուլացման ու «խաղասեղանից» հեռացնելու գործընթացին: Հատկապես Կիլիկիայի պարագայում, թերևս, հենց այդ գերագույն նպատակի իրականացման համատեքստում է, որ բացահայտվում է անգլիացիների՝ հաճախ անտրամաբանական թվացող վարքագիծը, քանի որ հայկական հարցը դիտարկվում է որպես հիմնական մրցակից Ֆրանսիայի ուսերը հավելյալ բարոյական ու նաև նյութական բեռով ծանրացնելու պարզ միջոց, և ոչ ավելին: Նշվածի վկայությունն է մասնավորապես այն, որ բրիտանական «Ագամեմնոն» հածանավի վրա թուրքերի անձնատվության (կապիտուլյացիայի) ու զինադադարի՝ Մուդրոսի համաձայնագիրը կնքվեց առանց ֆրանսիացիների ներկայության, քանի որ նրանց մասնակցության հայտը մերժվել էր և՛ անգլիացիների, և՛ թուրքերի կողմից[16]: Համաձայնագրի մի շարք դրույթներից երևում էր, որ սկզբունքորեն անտեսվել էին Պողոս Նուբարի կողմից տարբեր բանակցային ձևաչափերում անընդհատ առաջարկվող հայեցակարգային կետերը՝ հայկական շահերի վերհանման ու պահպանման առումով, և Կիլիկիան, այս համատեքստում, բացառություն չէր: Անգլիական ռազմավարությունն առավելապես ակներև է Կիլիկիայում՝ ֆրանսիական կառավարման ժամանակահատվածում, երբ վերջինիս կողմից փորձ էր արվում նախ՝ վերականգնել հայկական ինքնավարությունը, իսկ ապա նաև դրան տալ հանրապետական կառույցի կարգավիճակ: Տրամաբանական է, որ այս գործընթացի հիմքում տարագիր հայերի վերադարձի և, որպես իրավատեր, հայապատկան հողերի՝ վերստին վերջիններիս ամրագրման գաղափարներն էին՝ առանց որոնց ինքնավարության գաղափարը չէր կարող «միս ու արյուն» ստանալ: Սակայն, Ֆրանսիային,

[16] ԵՊՀ ՀՀԻ. Մուդրոսի զինադադար. 1918 թ. http://www.armeniansgenocide-am.armin.am/am/Encyclopedia_Of_armenian_genocide_Mudrosi_zinadadar_1918

հատկապես Կիլիկիայի տարածաշրջանում, վերապահված էր գործել «պոստ ֆակտում» սկզբունքով, քանի որ զինադադարի կետերը մշակվել էին անգլո-սաքսական տրամաբանությամբ և, իհարկե, ուղղված չէին ֆրանսիացիների կառավարումն ավելի դյուրին դարձնելուն: Մուդրոսի զինադադարից հետո բրիտանական զորքերը, որոնք, սկսած 1918 թվականի նոյեմբերից, տեղակայվել էին Կիլիկիայում, ընդամենը չորս ամիս անց հապշտապ հեռացան, և այնտեղ «դե յուրե» հաստատվեց ֆրանսիական քաղաքացիական կառավարում: Այս գործընթացն այնքան արագացված ու անհամաձայնեցված էր, որ ակամայից անգնահատելի նվեր դարձավ Կիլիկիայի տարածաշրջանում նախկին թուրք կառավարիչների և հատկապես այն զինյալ թուրքական զորախմբերի մնացորդների համար, որոնք չէին կատարել նահանջի ու զենքի հանձնման անձնատվության համաձայնագրային կետերը: Տեղի թուրքերի նմանօրինակ վարքագիծն ինքնաբուխ չէր, այլ կառավարվում էր հեղափոխականի պատմուճան հագած քեմալական բջիջների կողմից, որոնք համակարգում էին զենքի շարժն ու բանակային կադրերի գործողությունները: Արդյո՞ք անգլիացիներն անմիջական կապ ունեին այս ամենի հետ, դեռ բացահայտելիք է, սակայն սա կարևոր հանգամանք էր, որն ի սկզբանե դժվարացրեց ֆրանսիացիների քաղաքացիական կառավարումը, ինչն էլ բացասական անդրադարձ ունեցավ վերջիններիս կողմից իրականացվող իրավական գործընթացների վրա:

Կիլիկիայի տարածաշրջան վերադարձած 120 հազար հայերի համար սկսվեց անորոշության մի ժամանակաշրջան, իսկ ֆրանսիական կառավարիչների գործողությունները, որոնք համանման էին նրանց «տնային» մտածելակերպին, հեռու էին ճգնաժամային իրավիճակում օպերատիվ կառավարման սկզբունքներից և իրենց էությամբ բարդ ու ժամանակատար գործընթացներ էին: Հիմնական խնդիրն իրավական գործընթացն անշրջելի դարձնելն էր, որի համար հարկավոր էր հնարավոր սեղմ ժամանակահատվածում բուն հայկական բնակավայրերից, տներից ու շեներից դուրս հանել դրանք ապօրինաբար զավթած թուրքերին ու քրդերին, որոնք թուրքական ցեղասպան քաղաքականության արդունքում արդեն մի քանի տարի զբաղեցնում և օգտագործում էին իրենց չպատկանող անշարժ գույքը: Հասկանալի է, որ ամեն մի հապաղում այս պարագայում աշխատելու էր հօգուտ թուրքերի, որոնք հայերի բռնի տեղահանությունից հետո Բալկաններից ու Ռուսաստանից հազարավոր թուրք փախստականների հասցրել էին վերաբնակեցնել հենց հայկական Կիլիկիայի տարածքում և շատ օպերատիվ կերպով տիրացած գույքը ձևակերպել էին նոր փաստաթղթերով: Դրան հակառակ, 1915 թվականի բռնի՝ հաճախ նաև հանկարծակի տեղահանության ժամանակ հայերը թողել էին ամեն ինչ, ներառյալ անշարժ գույքի իրավատիրական փաստաթղթերը՝ «տապուները»[17], ինչը բարդություն էր առաջացնում գույքի, հատկապես հողային սեփականության նկատմամբ նրանց իրավունքների վերականգնման առումով: Հայապատկան հողերի և գույքի վերադարձի խնդիրն օրենսդրական ճանապարհով լուծելու համար ֆրանսիացիները փորձում էին կիրառել ապօրինի օգտագործողներից բռնագրավման սկզբունքը՝ արբիտրաժային դատարանի միջոցով[18], ինչը նման քաոսային իրավիճակում շատ դժվարիրագործելի միջոցառում էր, որը, իր հերթին, ավելի էր բարդացնում այդ տարբերակով խնդրի դրական լուծման հնարավորությունը: Անկախ այդ հանգամանքից, այլ ճանապարհներով գույքի վերադարձը վարչական ղեկավարների կողմից համարվեց անթույլատրելի, և Հայկական լեգեոնի գումարտակներին հնարավորություն չտրվեց հայապատկան գույքը վերադարձնելու սեփականատերերին զենքի ուժով: Անգամ այն սակավ դեպքերում, երբ խնդիրը հա-

[17] Տապու՝ Օսմանյան Թուրքիայում հողի սեփականտիրությունը հաստատող փաստաթղթերի փաթեթի թուրքերեն անվանումը:

[18] The Franco-Turkish conflict in Cilicia Sous-titre 1920-1921. https://www.cheminsdememoire.gouv.fr/en/franco-turkish-conflict-cilicia

սավ արբիտրաժային դատարան, և կայացվեցին հողի կամ գույքի վերադարձի վճիռներ, թուրք կամ քուրդ գյուղացիները քեմալական քարոզիչների քաջալերանքով հրաժարվում էին ամբողջապես կատարել դրանք: Եվ քանի որ ֆրանսիական քաղաքացիական ղեկավարությունը շատ դժվարությամբ էր առաջ տանում հողերի վերադարձման գործընթացը, ընդհանուր դրական ելքով արբիտրաժ հասած գործերի թիվը չնչին էր: Այդ պարագայում Ֆրանսիան իր իսկ կողմից որդեգրած անկատար քաղաքականության պատճառով ստիպված էր ապահովել իրենց տները վերադառնալ չկարողացող Ադանայի վրանային քաղաքի հայ բնակչության տարրական կենցաղը, որը ծանր ֆինանսական խնդիր էր, քանի որ միայն այդ հանգրվանային կետում տարագիր հայերի թիվը հասնում էր 60-80 հազարի:

Այս ամենն աշխատում էր հօգուտ քեմալականների, որոնք, ֆրանսիական ռազմական ուժերի ոչ բավարար լինելու հանգամանքը հաշվի առնելով, թուրք բաշիբոզուկների միջոցով ուղղակի ֆիզիկական հաշվեհարդար էին տեսնում այն հատուկենտ հայկական ընտանիքների նկատմամբ, որոնք, որպես սեփականատեր, օրենքի ուժով վերադառնում էին իրենց հայրենի օջախները, ինչը բարոյապես ճնշում էր վրանային քաղաքի հայերին, որոնց՝ դեպի հայրենի շեներ վերադառնալու հույսն օր օրի դառնում էր ավելի անիրատեսական: Միաժամանակ, նույն կառավարիչները վարում էին անհաջողությունները կոծկելու անհեռատես քաղաքականություն, որն ավելի շատ պարունակում էր գովազդի կամ թատերականացված ներկայացման տարրեր: Մասնավորապես՝ 1919 թվականի գարնանը՝ Ժորժ Պիկոյի այցին ընդառաջ, Ադանան զարդարված էր ոչ միայն ֆրանսիական դրոշներով, այլև այն հայկական եռագույնով, որն այդ պահին նորաստեղծ Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշն էր: Այս ամենն ինքնաբերաբար առաջացնում էր քեմալական ռազմական վերնախավի հակազդեցությունը, և հակաֆրանսիական գործողությունները սկսում էին դառնալ առավել ակնառու, իսկ վերադարձող հայերին կրկին սպառնում էր գոյաբանական վտանգը, որով էլ պայմանավորված, Ֆրանսիան նախ՝ դանդաղեցրեց, ապա նաև իսպառ դադարեցրեց դեպի Կիլիկիա հայերի հայրենադարձության գործընթացը:

Բռնի տեղահանում, իրենց բնօրրանը վերադառնալ ձգտող 120 հազար բնիկ հայեր, հողերի ու գույքի բռնազավթման, ապա դրանց վերադարձի գործընթաց, միջազգային խոշոր «խաղացողների» կողմից կիրառվող երկակի չափորոշիչներ, «անատամ» երաշխիք-խոստումներ...

Արդյո՞ք շատ չեն համընկնումները

Կարծես 100 տարի հետո էլ նույնն է կրկնվում, այս անգամ արդեն՝ Արցախ աշխարհից բռնի տեղահանված մեր հայրենակիցների ու նրանց ընտանիքների կյանքում...

Հետևապես՝ գոնե այս անգամ պետք է կարևորվի անցյալի դասերի խորքային վերլուծությունը, բացահայտվեն և ազնվորեն «գույքագրվեն» մեր «ավանդական» ու տևական ժամանակ կրկնվող սխալները, սեփական շահերի դիտանկյունից վեր հանվի կենսապահպան այն փաթեթը, որն Արևմուտքի, Հյուսիսի, Արևելքի ու Հարավի տարածաշրջանային խոշոր «խաղացողների» շահերի հետ համընկնումների համատեքստում կլինի ավելի իրատեսական ու իրագործելի:

Երկրորդ արարի վարագույրը

Արևմտյան ռազմավարության շրջադարձային փոփոխությունը Կիլիկիայի տարածաշրջանում ուրվագծեց հայկական գործոնից հրաժարվելու միտումը, որն իր հերթին հայկական Կիլիկիայի երկրորդ արարի ավարտի նախերգանքն էր: Այս եզրահանգման հաստատումն է նաև այն, որ Փարիզի՝ 1919 թ. հունվարին սկսված և մինչև նույն տարվա հունիս երկարաձգված հետպատերազմյան վեհաժողովի բանակցային հարթակում Ֆրանսիայի ներկայացուցիչներն արդեն սկսել էին այլ դիտանկյունով ընկալել նորաստեղծ Հայաստանի Հանրապետության պատվիրակության ներկայացուցիչ Ավետիս Ահարոնյանի և ազգային պատվիրակության ներկայացուցիչ Պողոս Նուբարի կողմից

ներկայացված հայկական օրակարգը, որտեղ նախանշվում էր, որ դեպի ինքնավարություն գնացող հայկական Կիլիկիան պետք է կազմի նորաստեղծ Հայաստանի Հանրապետության մի մասը: Հայկական կողմի այս դիրքորոշումը խիստ անհանգստացնում էր ֆրանսիացիներին, որոնք հավակնություններ չունեին նորաստեղծ Հայաստանի Հանրապետության վերահսկման մասով, իսկ հայկական ինքնավար Կիլիկիան տեսնում էին միայն իրենց պրոտեկտորալ շահերի համակարգում:

Թերևս, դրանով է բացատրվում այն, որ գաղտնի համաձայնագրի հեղինակներից ֆրանսիացի Ժ. Պիկոն, որն ի սկզբանե տարագիր հայերի խնդիրներով զբաղվողներին հավաստիացնում էր, որ Արևմուտքն ամեն կերպ օժանդակելու է նրանց զանգվածային հայրենադարձությանը դեպի հայրենի Կիլիկիա, ընդամենը կարճ ժամանակ անց հայտարարում է, որ հայրենադարձության գործընթացը չափազանց թանկ ձեռնարկ է և արդեն իսկ ֆրանսիական գանձարանից տարել է շուրջ իննսուն միլիոն ֆրանկ[19]: Պիկոյի արևելաթուրքական «ռեվերանսը» որոշիչ ազդակ եղավ Կիլիկիայում ակտիվացած քեմալականների համար, որոնք հասկացան, որ Արևմուտքի համար հայկական Կիլիկիայի ինքնավարության գաղափարը կորցնում է իր արդիականությունը:

Քեմալականների ակտիվությունն էական ազդեցություն ունեցավ տարածաշրջանում ֆրանսիական ռազմավարության փոփոխության վրա: Եվ 1920 թվականի փետրվարին ֆրանսիացիները լքեցին Մարաշը, ինչի հետևանքով տեղի հայ բնակչության զգալի մի հատված, որը չմիացավ նահանջող զորքին, ենթարկվեց կոտորածի: Այս նահանջը միաժամանակ լուրջ հարված հասցրեց Կիլիկիայում ֆրանսիացիների՝ առանց այն էլ մարող հեղինակությանը, որը, համաձայն հենց ֆրանսիացի զինվորների խոստովանության, ավելի շուտ խուճապի ու վախկոտության դրսևորում էր, քան նախապես մտածված ռազմավարական քայլ: Նույն թվականի ապրիլին ֆրանսիական կայազորը տարհանվեց Ուրֆայից, ինչի հետևանքով ֆրանս-թուրքական զինված գործողությունները տեղափոխվեցին Արևելյան Կիլիկիա, որը, համաձայն Սևրի պայմանագրի, ֆրանսիացիների վերահսկողության տակ էր: Հոկտեմբերին քեմալական զինյալները գրավեցին Հաճնը՝ կրկին գոյաբանական լրջագույն վտանգներ առաջացնելով բռնի տեղահանումից վերադարձած հայ բնակչության համար, և հայերի կրկնակի ցեղասպանությունը դարձավ անխուսափելի իրողություն:

Արդեն 1920 թվականի վերջին հարավային ռազմաճակատում Ֆրանսիան սկզբունքորեն սառեցրեց ռազմական գործողությունների տարածաշրջանային ծրագիրը և հետագա մարտավարական քայլերը փորձեց փոխշաղկապել Արևմուտքում թուրքերի և հույների միջև տեղի ունեցող ռազմական բախումների վերջնարդյունքի հետ:

1921 թ. փետրվարին 21-ին մեկնարկեց Լոնդոնի կոնֆերանսը[20], որի նպատակն էր կարգավորել «նորացող» Թուրքիայի հետ բոլոր բաց մնացած հարցերը: Կոնֆերանսի ընթացքում՝ մարտի 9-ին, Թուրքիայի Ազգային մեծ ժողովի ներկայացուցիչ Բեքիր Սամին ֆրանսիական կողմի հետ ձեռք բերեց պայմանավորվածություն՝ ռազմական գործողությունների վերջնական դադարեցման և զորքերի էվակուացման մասին, և ոչ մեծաքանակ ֆրանսիական զորքը Հարավային Թուրքիայից անցավ ու դիրքավորվեց Մուդրոսի հրադադարով հաստատված սահմանագծում: Ֆրանսիայի նմանօրինակ զիջողական վարքագիծն ուներ իր գինը, ինչը պարզվեց շատ կարճ ժամանակահատված անց, երբ ֆրանսիական խոշոր կապիտալը՝ թուրքական «երաշխավորագրով», տնտեսական ակտիվ գործունեություն ծավալելու իր ռազմավարական «ոտնատեղն» արեց Թուրքիայի հարավային և արևելյան հատվածներում: Ինչպես ասում են. «Ոչ մի անձնական բան: Պարզապես բիզնես»: 1921 թվականի սեպտեմբերի 13-ին հույն-թուրքական ռազմա-

[19] The Franco-Turkish conflict in Cilicia Sous-titre 1920-1921. https://www.cheminsdememoire.gouv.fr/en/franco-turkish-conflict-cilicia

[20] Լոնդոնի կոնֆերանս. 1921 թ., https://www.historyofarmenia-am.armin.am/am/Encyclopedia_of_armenian_history_Londoni_konferans_1921

ճակատում Սակարիայի ճակատամարտն ավարտվեց հունական բանակի նահանջով, ինչը բյուրեղացրեց Ֆրանսիայի վերջնական որոշումը: Նույն թվականի հոկտեմբերի 20-ին երկարատև ու ծանր բանակցություններից հետո կնքվեց ֆրանս-թուրքական համաձայնագիրը, որով դադարեցվեցին ռազմական գործողություններն ամբողջ ճակատով ու հստակեցվեց Թուրքիայի և ֆրանսիական մանդատի տակ գտնվող Սիրիայի միջև առկա սահմանագիծը:

Կիլիկյան Հայաստանի տարածքում Ֆրանսիայի ռազմավարական ծրագիրը, մի շարք գործոններով պայմանավորված, մնաց անկատար: Որո՞նք էին այդ գործոնները:

- Առաջին. վճռորոշ իրավիճակներում անգլիացիների՝ միտումնավորության աստիճանի հասնող կրավորական կեցվածքը, որը հատկապես ակնառու էր Ասիական Թուրքիայում և Մերձավոր Արևելքում՝ նրանց ու ֆրանսիացիների միջև գործարար շահերի բախման և անթաքույց մրցակցության համատեքստում:
- Երկրորդ. արդեն բոլշևիկյան դարձած Ռուսաստանի թրքամետ դիրքորոշումը, որը նպաստեց «նոր» Թուրքիա կերտող Մուստաֆա Քեմալի դերի ակտիվացմանն ու նաև ռուսական օժանդակությամբ թուրքական բանակի սպառազինմանը, ինչն էլ, իր հերթին, ֆրանսիացիների համար լուրջ խնդիրներ առաջացրեց կիլիկյան ռազմական թատերաբեմում:
- Երրորդ. Արևելյան Հայաստանում ինքնուրույն հայկական պետական միավորի ստեղծումը, որն էապես թուլացրեց ֆրանսիացիների գաղափարաբանական մղումը ևս մեկ, այս դեպքում՝ հայկական Կիլիկիայի ինքնավար միավորի ստեղծման առումով:
- Չորրորդ. հենց հայկական Կիլիկիայի տարածաշրջանում պատմական արդարության վերականգնման գաղափարի նկատմամբ ֆրանսիական կառավարության մարող հետաքրքրությունը, որի հիմնական շարժառիթներից էր Թուրքիայի հարավարևելյան տարածաշրջանում տնտեսական ակտիվ գործունեության ծավալման ու կապիտալի ներդրման հեռանկարային հնարավորությունը:
- Հինգերորդ. բանակցային հարթակներում հայկական կողմի՝ տվյալ պահին գրեթե անիրագործելի պահանջների փաթեթի առկայությունը, որով փորձ էր արվում հայկական Կիլիկիան միակցելու նորաստեղծ Հայաստանի Հանրապետությանը: Մի նպատակ, որի իրագործումը Ֆրանսիան տրամաբանորեն չէր կարող դիտարկել որպես իր գերակա շահ, քանի որ դա ընդհանրապես չէր «տեղավորվում» նրա տարածաշրջանային ռազմավարական ծրագրում:
- Վեցերորդ. տարածաշրջանի «խաղասեղանի» մոտ, ի դեմս ԱՄՆ-ի, նոր խաղացողի հայտնությունը և ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի պատրաստակամությունը՝ ստանձնելու Հայաստանի մանդատն ու իրավարար վճռով իրականացնելու նորաստեղծ Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի սահմանազատումը[21], որի արդյունքում Ֆրանսիայի դերակատարումը, ըստ էության, հասցվում էր նվազագույնի:
- Յոթերորդ. թուրքական՝ այդպես էլ չտրոհված հանրապետության ծնունդը, որը դեպքերի բերումով դարձել էր չափազանց էական հանգամանք, քանի որ նոր իրավիճակը ստիպում էր վերանայել Առաջին աշխարհամարտում հակաթուրքական դաշնակից երկրների, ներառյալ Ֆրանսիայի նախնական պայմանավորվածություններն ու մտադրությունները, որոնք նոր իրողություն-

[21] Վ. Վիլսոնի իրավարար վճիռը՝ «Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի որոշումը Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի, Հայաստանի դեպի ծով ելքի և հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ», 1920 թվականի դեկտեմբերի 6-ին պաշտոնապես փոխանցվեց Փարիզ՝ դաշնակից ուժերի Գերագույն խորհրդին: Ըստ այդմ՝ Հայաստանի Հանրապետության տիտղոսն ու իրավունքները ճանաչվում էին նախկին Օսմանյան կայսրության Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի նահանգների վրա՝ ընդհանուր առմամբ ներառելով 103.6 քառ. կմ տարածք, որն էականորեն փոքր էր այն տարածքից, որի վրա Մուդրոսի զինադադարի 24-րդ հոդվածով ճանաչվել էր հայկական տիտղոսը, որը, ի դեպ, ընդգրկում էր նաև հայկական Կիլիկիայի տարածաշրջանը:

ների պարագայում ուղղակի այլևս արդի չէին:

Տարածաշրջանային հետագա զարգացումները, որոնք տեղի էին ունենում հավաքական Արևմուտքի (ներառյալ ԱՄՆ-ը) և բոլշևիկյան Ռուսաստանի, որպես կանոն, ստվերային օժանդակությամբ ու համաձայնությամբ, որևէ դիտանկյունից հայանպաստ չէին, քանի որ ակնառու էին քաղաքական ու տնտեսական շահերի բազում համընկնումներ «աշխարհիկ» Թուրքիայի շահերի հետ, ինչն էլ հնարավորություն էր տալիս վերջինիս առաջնորդ Քեմալին հանդգնորեն հրաժարվելու Մուդրոսի զինադադարով որոշված սահմանները ճանաչելուց և անզիջում պայքար մղելու Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը պահպանելու համար: Այսինքն, պարտվելով Առաջին աշխարհամարտում, Թուրքիան վարպետորեն սեփական շահերը համակցեց խոշոր «խաղացողների» գերակա շահերի ու տնտեսական հավակնությունների հետ՝ վերջնարդյունքում հայտնվելով շահեկան դիրքում: Եվ հենց այդ նպաստավոր պայմաններում էլ 1923 թվականի հուլիսի 24-ին Լոզանի պայմանագրով Թուրքիան միջազգային հանրության կողմից ճանաչվեց որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդ:

Ի տարբերություն հայերի, որոնք տարածաշրջանային այս «թատերաբեմում» ևս մեկ անգամ հայտնվեցին ցեղասպանության և բռնի տեղահանման հորձանուտում, հունական միլիոնանոց համայնքի ճակատագիրը մի փոքր այլ կերպ դասավորվեց: Լոզանի պայմանագիրը հնարավորություն ընձեռեց իրականացնելու Թուրքիայում ապրող հույների և Հունաստանում ապրող իսլամադավան ազգությունների ներկայացուցիչների (առավելապես՝ թուրքերի) փոխանակում, որի արդյունքում Թուրքիայից դեպի Հունաստան և Հունաստանից՝ Թուրքիա տեղափոխվեց համապատասխանաբար՝ շուրջ 1,1 միլիոն և 380 հազար բնակիչ: Ընդ որում, Թուրքիա տեղափոխվածները հիմնականում հանգրվանեցին պատմական Կիլիկիայի տարածաշրջանում, որտեղից ևս մեկ անգամ՝ արդեն վերջնականորեն արտագաղթել էին հայերը՝ դրանով իսկ ազդարարելով հայկական Կիլիկիայի երկրորդ արարի ավարտը:

Դասեր, դասեր, դասեր ...

Ինչ նմանություններ ու զուգահեռներ ունեն կիլիկյան երկու արարները մերօրյա իրողությունների հետ:

Առաջին և հիմնական նմանությունն աշխարհաքաղաքական վերաձևումների ակտիվ ժամանակաշրջանն է, որի պարագայում մեծ «խաղացողները» հիմնականում մնացել են նույնը, ընդ որում, ոչ միայն «դերաբաշխման» առումով, այլև տարածաշրջանային իրենց շահերով, տեսանելի ու անտես հավակնություններով և նկրտումներով:

Երկրորդն արտաքին միջավայրում նորից անգլո-սաքսական և ֆրանսիական մրցակցային գերակա բաղադրիչով փոխհարաբերությունների առկայությունն է, որի որոշիչ ներազդեցությունն առաջին արարում՝ Կիլիկիայի թագավորության անկման ժամանակ, եզրափակվեց անգլո-ֆրանսիական ռազմական երկարաժամկետ հակամարտության՝ Հարյուրամյա պատերազմի նախերգանքով: Երկրորդ արարում, թեև վերջիններս համարվում էին դաշնակիցներ, այդուհանդերձ թեժ մրցակցությունը պահպանվեց, և այս գործոնին ավելացավ ևս մեկ մրցակցային զույգ՝ ռուս-թուրքականը: Վերջիններիս մրցակցության պատմությունը լի է «սառը» և «տաք» փուլերով, անսպասելի մերձեցումներով ու անակնկալ «ջղաձգումներով», որոնք, ի վերջո, որպես կանոն, ավարտվում են նրանով, որ նրանք դիրքավորվում են աշխարհակարգի տարբեր բևեռներում, սակայն, տարածաշրջանային կառավարման ու նպատակների իրականացման դիտանկյունից, միևնույն է ունեն շահերի բազում համընկնումներ, որոնք որևէ կերպ հայանպաստ չեն եղել ու չեն լինելու:

Արտաքին միջավայրի իրավիճակային ախտորոշումը հստակ կերպով ցույց է տալիս, որ դարերի ժամանակագրական հոսքը տարածաշրջանում ոչինչ չի փոխել: Դա մինչ օրս «պարզ/բարդ-կայուն/անկայուն» մատրիցի ծանր՝ բարդ-անկայուն միջավայրում է, որտեղ ներազդող գործոն-տարրե-

ը շատ են, իսկ դրանց փոփոխությունը կարող է տեղի ունենալ անսպասելի կամ անկանխատեսելի արագ կերպով: Նման իրավիճակում գտնվող արտաքին միջավայրում ուղղակի անթույլատրելի շռայլություն կարող է համարվել սեփական անցյալից դասեր չքաղելը՝ հաշվի առնելով, որ բարդ-անկայուն իրավիճակի արձանագրումը ոչ այլ ինչ է, քան իրավիճակի իրատեսական ախտորոշում և ոչ թե թևաթափ լինելու դատավճիռ: Ընդ որում, հենց այս իրավիճակն է, որ տնտեսության յուրաքանչյուր ոլորտ ստիպողաբար մղում է անընդհատ զարգացման ու առաջընթացի, և սա անառարկելի ճշմարտություն է նաև պետությունների կայացման ու զարգացման պարագայում:

Ինչ վերաբերում է ներքին միջավայրին, ապա այս դեպքում հիմնական բացասական բաղադրիչները ցավալիորեն եղել ու մնում են նույնը՝ անմիաբանությունը, «նպատակների ծառի» անիրատեսական և, իրագործելիության տեսանկյունից, բավական փխրուն հիմքի կառուցումը, արտաքին դոկտրինի և գերակայությունների պատեհապաշտական փոփոխությունները, հատկապես վարվող քաղաքականության՝ և/և-ի ու կամ/կամ-ի մոտեցման կիրառման անհարկի առճակատումը, երբ նրանցից ցանկացածի կիրառումը ավելի շուտ գտնվում է արտաքին հակազդեցությունների վտանգավոր շղթայում, որն էլ, որպես կանոն, աշխատում է ի վնաս, այլ ոչ թե ի շահ մեզ: Ակնառու է, որ անգամ խոշոր «խաղացողները», ինչպես դարեր առաջ, այնպես էլ այժմ գիտակցում են, որ մեր պետության խաչմերուկային քաղաքականությունը չի կարող կառուցվել այս երկու դոկտրինից որևէ մեկի բացարձակ մոդելի կիրառմամբ: Դա ավելի շուտ վերոնշյալ դոկտրինների համակցության և մեր պետության «ակտիվ չեզոքության» կենսական հարթակում է դառնալու արդյունավետ կիրառելի: Այս դեպքում այստեղով՝ «մեր տան» միջով ոչ թե կանցնեն աշխարհաքաղաքական հակամարտության սահմանագծերը, այլ կխաչվեն միջազգային փոխշահավետ համագործակցության կամուրջները:

Ներքին միջավայրի մյուս կարևոր բաղադրիչը եկեղեցական (կրոնական) ինստիտուտն է՝ ընդհանրապես, որտեղ որոշիչ դերակատարումն իհարկե ՀԱԵ-ինն է, որն էլ, իր հերթին, ունի ներքին ինստիտուցիոնալ չլուծված գերխնդիր՝ լինել եկեղեցապահպան և ապա ազգապահպան, թե հակառակը: Այս խնդիրը հատկապես տեսանելի է դառնում ազգի գոյաբանության ճակատագրական պահերին, և ցավոք, մինչ օրս չի գտնվել կիրառական լավագույն բանաձևը:

Արձանագրենք նաև, որ «նպատակի ծառի» դիտանկյունից, կիլիկյան երկու արարից առաջինի դեպքում հընթացս առարկայացավ գոյության ու կենսագործունեության համար անհրաժեշտ հիմնական նպատակը՝ պետական միավորի հիմնադրումը՝ ի դեմս Կիլիկիայի թագավորության, իսկ երկրորդում կարևոր նպատակը «դոփեց» նախագծային փուլում, և ինքնավար միավորի ստեղծման գործընթացի գաղափարական «բողբոջներն» այդպես էլ չբացվեցին:

Միաժամանակ, երկրորդ արարը, իր հերթին, յուրահատուկ էր, քանի որ նույն ժամանակահատվածում՝ Կիլիկիայի պետականակերտման նոր նախագծին զուգահեռ, անդրկովկասյան տարածաշրջանում ստեղծվում էր հայկական պետական առանձին միավոր՝ Հայաստանի առաջին հանրապետությունը, որի պարագայում ևս մեկ այլ հայկական պետական միավորի հիմնադրումն արտաքին աշխարհի կողմից չէր կարող համարվել գերակա շահ:

Երկրորդ արարում, ինչպես և ներկայում, բացահայտվում է ներքին միջավայրի մեր ավանդական «հիվանդությունը», որն արտահայտվում է նորաստեղծ հանրապետության կառավարիչների ու ազգային գործիչների չհամակարգված, հաճախ նաև իրար հակասող գործողություններով: Դրա հիմքում ինստիտուցիոնալ կառույցների սաղմնային վիճակն է կամ ոչ լիարժեք գործունեությունը, անվտանգային հայեցակարգի բացակայությունը՝ ներառյալ արտաքին գործոնների ներազդեցության չափի և ռիսկերի գնահատման թերհաշվարկը, իրատեսության պակասն ու, կամային քայլեր կատարելու առումով, ավելորդ վախվորածությունը, որի հե-

տևանքով էլ միջազգային տարբեր համաժողովներում ու քննարկումներում հայկական շահերը ներկայացնող գործիչներին պակասել և պակասում է միասնական նպատակային քաղաքական ռազմավարությունը (նրանց գործողություններում գերիշխում են մարտավարական ու օպերատիվ քայլերը):

Երկրորդ արարում ակնառու է նաև այն, որ Սևրի պայմանագիրը, անկախ իրագործման վերջնարդյունքից, կարծես թե, հարմար շարժառիթ դարձավ Ֆրանսիայի համար՝ ազատվելու հայերի հանդեպ պատասխանատվության բարոյահոգեբանական բաղադրիչից և իրականացնելու որոշակի շտկումներ տարածաշրջանային շահերի իր փաթեթում՝ գերակայության նժարը թեքելով դեպի գործարար բաղադրիչ: Ֆրանսիան դա հիմնավորվում էր այն հանգամանքով, որ Սևրի պայմանագրի դրույթներն ինքնին հայանպաստ էին, և հետևաբար՝ իր դիրքորոշումը չէր դիտարկում որպես նահանջ մեկնակետային սկզբունքից: Այդ առումով, պատահական տարեգրային համընկնում չէ նաև այն փաստը, որ 1920 թվականի օգոստոսի 10-ին՝ Ֆրանսիայի Սևր քաղաքում կնքված պայմանագրից ընդամենը 10 օր հետո, ֆրանսիական բանակի կազմում պաշտոնապես լուծարվեց «Հայկական լեգեոնը», ասել է թե՝ գալիս էին հայանպաստ նոր ժամանակներ, որոնք իրենց բնույթով ավելի շատ վարկածայնության (հիպոթետիկ) տարրեր ունեին, քան «միս ու արյուն» ստանալու հավանականություն:

Մի խոսքով, արարները տարբեր են, իսկ արտաքին ու ներքին ներազդող գործոններն ու սուբյեկտային շահերը՝ զարմանալիորեն նույնը:

Հայկական Կիլիկիայի մերօրյա նյութականացումը հայոց վերջին՝ 12-րդ մայրաքաղաք Երևանի սրտում նախորդ դարի սկզբին պատմական Կիլիկիայի տարածքից դեպի Հարավ ու Արևմուտք արտագաղթած, ցեղասպանությունից փրկված և Երկրորդ աշխարհամարտից (1939-1945 թթ.) հետո Հայաստան ներգաղթած մեր ազգակիցներով բնակեցված՝ Կիլիկիա անվանումով թաղամասն է, Արմավիրի մարզի Մուսա Լեռ գյուղը՝ Հերոսամարտին նվիրված հուշարձան կոթողով ու 40 կաթսաներում ամենամյա եփվող հարիսայով, Սևանա լճի քարքարոտ ափին կանգնած՝ պատմական Այաս նավահանգըստի ծովային պատմությունը վերամոդելավորող ու հայերիս 650-ամյա երազանքը մարմնավորող քսանամյա «Կիլիկիա» առագաստանավը, մեկ անվանում գարեջրի 22ին և XIX դարի երևելի մտածող, Արևմտահայոց Սահմանադրության մշակողի՝ ազգային-հասարակական գործիչ Նահապետ Ռուսինյանի անկեղծ ներշնչանքով գրված ու պոլսահայ երաժիշտ Գարեգին Երանյանի երաժշտությամբ ստեղծված «Կիլիկիա» երգի հնչյունների տակ ծփող դրախտային ու արևային երկրի տեսիլքը: Ուրիշ՝ ոչինչ:

Առայժմ՝ ոչինչ

Այդուհանդերձ, հայկական Կիլիկիան մոգական ուժ ունի, և իհարկե, աշխարհաքաղաքական ու հատկապես տարածաշրջանային նոր իրողություններն ու զարգացման միտումները հուշում են, որ երբեք չպետք է բացառել Կիլիկիայի երրորդ արարի ծնունդը՝ հատկապես հաշվի առնելով այն, որ 100 տարի առաջ աշխարհակերտ «ճարտարապետների» կողմից ստեղծված՝ իրավական զորություն ունեցող Սևրի պայմանագիրը, Վիլսոնի իրավարար վճիռը, անկախ ոմանց մեծ ցանկությունից, իրագործելիության տեսանկյունից համարվում են «բաց» փաստաթղթեր: Մասնավորապես՝ Վիլսոնի իրավարար վճիռն իր բնույթով վերջնական է, կատարման համար՝ պատադիր ու չունի ժամկետային սահմանափակում: Լոզանի պայմանագիրը, որը Թուրքիայի ճանաչումն էր՝ առանց հայկական Կիլիկիայի որոշ հատվածների, սկզբունքորեն նույնպես «բաց» փաստաթուղթ է, քանի որ հետագայում՝ հենց նույն Կիլիկիայի մասով, այն խախտվել է թուրքերի կողմից:

Պատմությունը և պատմական դասերը միայն սերտելու համար չեն, այլ դրվագդրվագ, շերտ-շերտ վեր հանելու, ազնվորեն վերծանելու, բացահայտելու, վերլուծելու և եզրահանգումներ անելու: Եվ այն ազգը, որը կարողանում է անցյալի դասերից օգուտ քաղել ու դրանց հիման վրա կա-

ռուցել առաջընթացի ուրույն, անվտանգ, իրատեսական ուղի՝ իր զինանոցում ունենալով իրավիճակի փոփոխման ու զարգացման բազմաթիվ մշակված սցենարներ, կազմ ու պատրաստ է դիմակայելու նոր, հաճախ անկանխատեսելի իրավիճակներին: Այն ազգը, որը չի դեգերում «մեծ եղբոր» կամ արտաքին ուժի «պաշտպանիչ վահանի» փնտրտուքների ինքնակործան արահետներում, սեփական շահն անվերջ չի ստորադասում աշխարհի ուժեղների տարաբևեռ շահերին, այլ կառուցում է դրանց համընթաց քայլելու ճկուն ռազմավարություն ու մարտավարություն, այլևս դատապարտված չի լինելու պարբերաբար կանգնել սարքովի ակնկալիքների դասական «փոցխի» վրա կամ շինծու ցանկությունների «կոտրված տաշտակի» առաջ:

Հ.Գ. Լոզանից 100 տարի անց՝ 2023 թվական փետրվարին, Հարավային Թուրքիայում տեղի ունեցած երկրաշարժերի հասցեական քարտեզը զարմանալիորեն ուրվագծում է հայկական Կիլիկիայի տարածաշրջանը[22]: Այն Կիլիկիայի, որի բազմադարյա հայոց շեները մեկ դար առաջ քաղաքակիրթ աշխարհի մեծ «խաղացողների» թողտվությամբ, թուրքական պետության հակահայ քաղաքականության հետևանքով ավերվեցին կամ ապօրինաբար զավթվեցին ու դարձան այլոց ապրելատեղեր:

Հենց այդ ապրելատեղերն ու տարածաշրջանի այլ հազարավոր շենքեր ու շինություններ տառացիորեն հիմնահատակ եղան ավերիչ բնական աղետից՝ անօթևան թողնելով ու տարագիր դարձնելով միլիոնավոր թուրքերի ու քրդերի:

Տիեզերքի արդարության բնական օրենքներն անքննելի են ու անմեկնելի ...

[22] M7.8 Turkey Mainshock and Aftershocks as of February 6, 2023 https://www.usgs.gov/media/images/m78-turkey-mainshock-and-aftershocks-february-6-2023

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մակիչ Արզումանյան, Հայաստան 1914-1917, Հայաստան հրտ., Եր., 1969, 780 էջ:
2. Զ. Գևորգյան, Աշխարհաքաղաքական գործընթացները և միջազգային առևտուրը Կիլիկյան Հայաստանում (1201-1337 թթ.), ՀՀ ԳԱ ՊԻ, https://arar.sci.am/dlibra/publication/308434/edition/283214/content
3. Ս.Պողոսյան, Հայկական լեգեոնը առաջին աշխարհամարտի տարիներին. «Էջմիածին» կրոնագիտական և հայագիտական ամսագիր, 2009, Դ.13 էջ. https://arar.sci.am/Content/253207/file_0.pdf
4. Ս. Պողոսյան, Մուդրոսի զինադադարը և հայկական հարցը, Մ. Մաշտոց համալսարան. Լրատու, 2016:
5. Историческая справка. Сазонов Сергей Дмитриевич. https://www.mid.ru/ru/about/professional_holiday/history/1713935/
6. LOUIS DARTIGE DU FOURNET. https://auroraprize.com/en/louis-dartige-du-fournet
7. Մուսա լեռան ինքնապաշտպանությունը. 1915 թ. օգոստոս-սեպտեմբեր, http://www.genocide-museum.am/arm/pdf/Musaler.pdf
8. ԵՊՀ ՀՀԻ. Մուդրոսի զինադադար. 1918 թ., http://www.armeniansgenocide-am.armin.am/am/Encyclopedia_Of_armenian_genocide_Mudrosi_zinadadar_1918
9. The Franco-Turkish conflict in Cilicia Sous-titre 1920-1921. https://www.cheminsdememoire.gouv.fr/en/franco-turkish-conflict-cilicia
10. Լոնդոնի կոնֆերանս. 1921 թ., https://www.historyofarmenia-am.armin.am/am/Encyclopedia_of_armenian_history_Londoni_konferans_1921
11. M7.8 Turkey Mainshock and Aftershocks as of February 6, 2023, https://www.usgs.gov/media/images/m78-turkey-mainshock-and-aftershocks-february-6-2023

Амазасп ГАЛСТЯН
Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ,
кандидат экономических наук

ВИДЕНИЕ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА

УРОКИ КИЛИКИИ. ЧАСТЬ ПОСЛЕДНЯЯ

История Армянского Киликийского королевства, как государственной единицы, построенной по принципу альтернативного решения в армянской парадигме государственности, является одной из важных частей нашей бесценной коллекции исторических уроков. Падение Киликийского царства по праву считается последним этапом армянской монархической жизни. Однако впоследствии выяснилось, что, особенно в ближневосточном регионе, козырная карта Армянской Киликии не была полностью «выбита» и все еще сохранялась в «карточной колоде» основных «игроков» Запада.

Последняя часть цикла статей совершает хронологический скачок примерно на пять с половиной веков к началу XX века, периоду Первой мировой войны, когда Турция, административная часть которой включала область Киликии, как страна-союзница с Германией, активно участвовала в военных действиях на ближневосточном фронте.

Последней в случае отрицательного исхода войны грозила опасность реализации сценария раздела ее территорий, разработанного странами Антанты, в частности Великобританией, Францией и Россией, в соответствии с собственными амбициями и геополитическими идеями.

Именно в этот период крупные «игроки» Запада в очередной раз вытащили из собственной «колоды игральных карт» козырную карту Киликии, на этот раз с целью создания автономной Армянской республики, а не царства.

Этот урок особенно примечателен, поскольку он раскрывает коллективное поведение Запада и Севера по отношению к нации, ставшей жертвой политики геноцида Османской империи, а затем ее преемницы, Турции, во время Первой мировой войны. Более того, регион Киликия с его армянонаселенными городами и поселениями стал одним из главных объектов геноцидной политики Турции.

Ключевые слова: *Армянская Республика Киликия, Французский мандат, Первая мировая война, Геноцид, Армянский легион*

Hamazasp GALSTYAN
Senior Researcher at "Amberd" Research Center, ASUE,
PhD in Economics

THE VISION OF THE ARMENIAN SOCIETY

CILICIA LESSONS: THE LAST PART

The history of the Armenian Kingdom of Cilicia, as a state unit built on the principle of an alternative solution in the Armenian statehood paradigm, is one of the important parts of our invaluable collection of historical lessons. The fall of the Cilician kingdom is rightfully considered the last stage of the Armenian monarchical life. However, it later became clear that, especially in the Middle East region, the trump card of Armenian Cilicia was not completely "knocked out" and was still preserved in the "card deck" of the main "players" of the West.

The last part of the series of papers makes a chronological leap of about five and a half centuries to the beginning of the 20th century, the period of the First World War, when Turkey, the administrative part of which included the region of Cilicia, as an allied country with Germany, actively participated in military operations on the Middle Eastern front.

In the event of a negative outcome of the war, Turkey was in danger of implementing the scenario for the division of its territories, developed by the Entente countries, in particular Great Britain, France and Russia, in accordance with their own ambitions and geopolitical ideas.

It was during this period that the major "players" of the West once again pulled out Cilicia's trump card from their own "deck of playing cards," this time with the goal of creating an autonomous Armenian republic, rather than a kingdom.

This lesson is particularly noteworthy because it reveals the collective behavior of the West and the North towards a nation that fell victim to the genocidal policies of the Ottoman Empire and then its successor, Turkey, during the First World War. Moreover, the region of Cilicia with its Armenian-populated cities and settlements became one of the main targets of Turkey's genocidal policy.

Keywords: *Armenian Republic of Cilicia, French Mandate, First World War, Genocide, Armenian Legion*